

ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԻ ՊԱՐԸ

Սասունցի Ափօ Գալուստի յիշատակին...

Դու ծանօթ ես Աշնակ գիւղին,
Ուր ծիրանն է հասնում ճիւղին.
Ուր կտրին չիրն է քաղցրանում,
Ուր հօտը սարն է բարձրանում.
Ուր, փեշի տակ Արագածի,
Տան կտուրին նստած հացի,
Չայն են տալիս իրար հերթով
Եւ գիւղամէջ գալիս խմբով,
Աղջիկները՝ կարմիր հագած,
Տղաները՝ փուշի կապած.
Երբ զուռնան իր ձայնը զլում՝
Դափի բերնից խօսքը խլում,
Աշնակ գիւղից հիւր է կանչում
Շղարշիկին ու Աղաքչուն,
Կաթնաղբիւրին, Դաթաշէնին,
Իրինդին ու Սասնաշէնին,
Թէ՛ հերի՛ք է հնձե՛նք, վարե՛նք,
Եկէք Սասնայ պա՛րը պարե՛նք:

...Թող Սասունն իր պարը պարի,
Իսկ դու դեռ մի՛ ծափահարի.
Այլ հասեացիր, թէ այս պարով՝
Մերթ Սնդոկից գրոհ տալով,
Մերթ գաղթելով սար ու քարով,
Մէկ խնդալով ու տառ լալով,
Սասունը քեզ ի՛նչ է ասում...

Հէյ վա՛խ, Աշնակ տեսած լաօ,
Թէ տեսնէիր մի օր Սասո՛ւն...
Սասնայ սարեր՝ մէջ ամպերուն,
Սասնայ ջրեր՝ մէջ վիհերուն,
Ամէն սարին՝ մի վանք ու բերդ,
Ամէն ջրին՝ ջաղացի հերթ,
Ամէն քարից ջո՛ւր էր գալիս,
Աչքն ո՛ւր թեքուէր՝ դո՛ւր էր գալիս.
Երկնուց իջնում էր մանանա՛...

Ի՞նչ մանանա՝ լաւ մահանա՛յ, -
 Որ Սասունցի հարս ու աղջիկ,
 Դաշտ իջնէին խունջիկ-մունջիկ.
 Գազպայի տեղ՝ նա՛գ ջաղէին,
 Հօտաղ տղի սիրտ դաղէին,
 Որ հայրական հին տան կողքին,
 Անտառի մէջ, ժայռի ճեղքին,
 Մի նոր քողտի՛կ անլանար,
 Մի խորոտիկ հա՛րս մայրանար,
 Նոր օրօրո՛ց գնար ու գար.
 Բարին լինէ՛ր, չարը՝ չգա՛ր...

Հէյ վա՛խ, Սասնայ բարձրիկ սարեր,
 Հէյ վա՛խ, Սասնայ քաղցրիկ ձորեր.
 Զուռնան էսօր թէ նուագէր՝
 Եկող ամրան կ'արձագանգէր
 Սասնայ ամէն թուփ ու քարից.
 Ու թէ տհուլն էսօր թնդար,
 Մինչև աշուն, դեռ անդադար,
 Ամէն գիշեր ու ամէն օր
 Ժեռ-ժեռ քարեր Անդռկ սարից
 Յա՛ծ կ'իջնէին գլոր-գլոր...
 Բարին լինէ՛ր, չարը չգա՛ր...

Բայց թէ լինես միայն մի բուռ,
 Դու սի՛րտ լինես, չորս կողմը՝ քա՛ր,
 Չարը՝ հզօր, իսկ դու՝ տկար,
 Աղօթք անես թէ խաչհամբո՛յր,
 Չարի ձեռքից պրծում չկա՛յ...
 Եւ դեռ «գաթէք թոնհիդն ի կախ»,
 Եւ դեռ հարթած՝ փեսայ, աճեր,
 Մինչև մերիկն ասէր «հէյ վա՛խ»,
 Փեսան գոմից բերդա՛ն հանէր,
 Զուռնան չոլում ընկած մնաց,
 Դափը՝ գլոր-գլոր գնաց,
 Եւ ով ողջ էր՝ սարերն ընկած,
 Գերանդու տեղ բերդան գրկած,
 Մէկ ապրելով, տաս մեռնելով,
 Մէկ զարկելով, տաս զարկուելով,
 Թողին Սասնայ զմրուխտ սարեր,
 Դաթի ջաղացն ու իր քարեր,
 Եկան Ռուսի հողը հասան,
 Բայց, էստե՛ղ էլ կռիւ տեսան,

Տեսան աներ ու կոտորած,
 Եւ ի՛նչ մնաց.... մի Սասնաշէն,
 Մի Բազմաբերդ ու Դաւթաշէն,
 Մի Կաթնաղբիւր ու Աղաքչի,
 Մի խեղճ Իրիմդ ու Շղարշիկ
 Եւ մի Աշնակ՝ չոլում կորա՛ծ...

Հէյ վա՛խ, Մշոյ սարսո՛ւտ հողեր,
 Դէ՛, քա՛ր մաղի, որ հո՛ղ դառնայ.
 Հէյ վա՛խ, Սասնայ զուլա՛լ ջրեր,
 Դէ՛, ձի՛ն հալի, որ ջո՛ւր դառնայ.
 Հէ՛յ Աշնակայ չոլ ու դներ՝
 Աշնակն ինչպե՛ս Սասուն դառնայ...

Եկան, դրին քարը քարին՝
 Դուշմանն եկաւ խառնեց իրար.
 Ողջ ու մեռել ջոկ-ջոկ արին՝
 Դուշմանն եկաւ խառնեց իրար.
 Մինչև արիւնը թանձրացաւ,
 Կարմիր գոյնի դրօշ դարձաւ,
 Մինչև մանգաղն ելաւ հողից,
 Մուրճը պոկուեց սայի կողից,
 Ու երկուսն էլ, եղբօր նման,
 Այդ դրօշի վրայ ելան
 Ու նոր արև ծագեց հողին,
 Հող վարողին, հող սիրողին:
 Մինչև նորից օճախ դրին՝
 Ծուխը սողաց.
 Մինչև նորից տաք թոնիրին
 Բոցը շողաց.
 Մինչև նորից, խոնջիկ-մունջիկ,
 Դաշտ գնացին հարս ու աղջիկ,
 Որ աղցան ու սիւրճի քաղեն,
 Հօտաղ տղի սիրտը դաղեն,
 Հօր արտի մօտ նոր արտ վարեն,
 Արթիկ տուֆից նոր պատ շարեն,
 Մի նորելուկ հա՛րս մայրանայ,
 Մի նոր թոնրի ծո՛ւխ բարձրանայ,
 Նոր օրօրո՛ց գնայ ու գայ,
 Բարին՝ տևի՛, շարը չգա՛յ...

...Եւ երբ տեսան, էլ չարորդին
 Մօտ չի՛ գալիս,

Եւ երբ տեսան՝ էլ վառօդի
 Հոտ չի՛ գալիս, և երբ տեսան՝
 Էլ չի՛ թափում հողին արին,
 Եւ երբ տեսան՝
 Եկաւ աշուն, եկաւ գարուն,
 Առանց արհի, կոտորածի,
 Բա՛ց արեցին սուփրէն հացի,
 Զուռէն խօսե՛ց բերանացի
 Եւ Արագած լերան գոգին
 Զարթնե՛ց կրկին Սասնայ ոգին...

Եւ Սասունը նորի՛ց պարեց,
 Ոտքը զարկեց, ձեռքով արեց,
 Եւ նոյն զուռնան, որ հնչում էր
 Հին տան բակում, հնչեց
 Հիմա ամէն գիւղում ու քաղաքում,
 Իսկ տհուլը, որ քարե՛ր էր պոկում սարից՝
 Ծափե՛ր պոկեց ամէն ազգից ու
 Աշխարհից...
 Պարե՛ց Սասունն, ու ողջ
 Աշխարհը հիացաւ,
 Պարե՛ց Սասունն, ու ողջ
 Աշխարհը հասկացաւ,
 Որ երբ նազում են աղջիկներն ու տղանում՝
 Սասնայ ձորից ջուր են բերում,
 Արտ քաղհանում.
 Երբ ոտքի տակ տղաների հո՛ղն է թնդում՝
 Հօտաղները Սասնայ սարում
 Գա՛լլ են խեղդում.
 Երբ խոնում՝ կարծես ամպրոպ
 Պայթի սարում՝
 Այդ ոտխն է նրանց գիւղերը պաշարում.
 Երբ միանում՝
 Բե՛րդ են դառնում շինուած քարից՝
 Այդ ոտխին ե՛տ են ըշում Անդոկ սարից.
 Իսկ երբ ձեռքը ձեռքին զարկում,
 Ծա՛փ են տալիս՝
 Մահուան վիհից դէպի կեանքի
 Ա՛փ են գալիս...

Պարե՛ց Սասունն, ու ողջ աշխարհը հիացաւ,
 Պարե՛ց Սասունն, ու ողջ աշխարհը
 հասկացաւ,

Որ պար չէ սա, այլ՝ մի երկրի ...
 Քաջ պատմություն,
 Ուր պարտությունն անգամ
 Ունի հպարտություն,
 Եւ չի՛ յաղթի ոչինչ այն հին ժողովրդին,
 Որ այս քանքո՛ւմ ու այս կամքո՛ւմ
 Պարե՛լ գիտի...

Հասկացան ու ասին ի լուր ողջ աշխարհի.
 — Հայա՛լ է քեզ, Սասո՛ւն, պարի՛...
 Պարի՛, դու դեռ երա՛զ ունես կատարելու,
 Վրէ՛ժ ունես պատմությունից դեռ հանելու.
 Պարի՛, գազպան դեռ քո ձեռքի՛ն է
 կարօտում,
 Սասնայ հողը վար ու հերկի՛ է կարօտում.
 Պարի՛, մինչև ողջ Հայերին դու ամբարե՛ս,
 Եւ այս պարը
 Մասիս լեռան լանջի՛ն պարես...

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ